ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

02 հունիսի 2023 թվականի թիվ 51-Ա

ք.Երևան

«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2023 թվականի մայիսի 2-ին, իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 19 վարչական վարույթի նյութերը՝ պարզեց.

Հանձնաժողովի կողմից «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս, Հեռարձակողների գործունեության մշտադիտարկման արդյունքում, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հեռարձակող) կողմից հեռարձակվող «Ազատություն Թիվի» տեսալսողական ծրագրի 2023 թվականի ապրիլի 26-ի տեսալսողական հաղորդումների ընթացքում արձանագրվել է «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթի պահանջի խախտման փաստ:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 2023 թվականի մայիսի 2-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից Հեռարձակողի գործունեության դիտարկման արդյունքների հիման վրա 2023 թվականի մայիսի 2-ին կազմված մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, որն Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն հիմք է հանդիսանում վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայում է որպես վարչական վարույթի ապացույց:

Ըստ արձանագրության, Հեռարձակողի՝ «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ» ՍՊ ընկերության կողմից հեռարձակվող «Ազատություն Թիվի» տեսալսողական ծրագրի 2023 թվականի ապրիլի 26-ի տեսալսողական հաղորդումների ընթացքում ցուցադրվել են ծխելու

տեսարաններ, որոնք սակայն չեն ուղեկցվել «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառմամբ, մասնավորապես՝

-00:11:36-00:29:19 ցուցադրված տեսալսողական հաղորդման ընթացքում՝ 00:17:39-ին, 00:20:11-ին, 00:25:52-ին.

-02:24:44-03:19:59 ցուցադրված տեսալսողական հաղորդման ընթացքում՝ 02:51:30-ին.

-08:16:20-08:32:07 ցուցադրված տեսալսողական հաղորդման ընթացքում՝ 08:22:13-ին, 08:29:07-ին, 08:31:13-ին:

Վերոնշյալը պարունակում է «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի խախտման հատկանիշներ, այն է՝ Ծխելու տեսարաններ պարունակող տեսալսողական հաղորդումը՝ **դրա մեկնարկին, տեսանելի չափով, հինգ վայրկյան տևողությամբ պետք է ուղեկցվի «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառմամբ:**

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2023 թվականի մայիսի 3-ին, թիվ Ե/07/207-23 գրությամբ ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հեռարձակողը 2023 թվականի մայիսի 9-ի իր գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել նշված վարչական վարույթի վերաբերյալ իր պարզաբանումները նշելով, որ խախտումը թյուրիմաճության հետևանք է եղել, պայմանավորված թողարկող, մոնտաժող անձնակազմի թերացմամբ և որևէ դիտավորություն այդտեղ չի եղել:

Նշվել է նաև, որ «Ազատության» ռեպորտաժի նպատակը նաև ծխելու բացասական ազդեցության մասին էր, պարունակում էր լուրջ վիճակագրական տվյալներ այն մասին, թե քանի կյանք է տարեկան նիկոտինը խլում Հայաստանում: Ավելին՝ ռեպորտաժում ներկայացված է եղել մասնագետների դիրքորոշումը այն մասին, որ սահմանափակումներից ու տուգանքներից բացի բժիշկները պետք է մարդկանց հետ հնարավորինս շատ խոսեն ծխախոտի վնասակարության մասին: Նշել է, որ տեսանյութում նաև երևացել են ծխելը թողնելու մասին բրոշյուրներ: Իսկ ներկայացված տեսանյութում կա ընդամենը ծխելու մոտ հինգ վայրկյան տևողությամբ կադր, հեռվից և աղավաղված:

Հեռարձակողը տեղեկացրել է, որ բովանդակությունը ստեղծողները զգուշացված են և հետագայում նման թերացումը կբացառվի:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությամբ, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ Ծխելու տեսարաններ պարունակող տեսալսողական հաղորդումը՝ դրա մեկնարկին, տեսանելի չափով, հինգ վայրկյան տևողությամբ պետք է ուղեկցվի «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառմամբ:

«Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ

ծխախոտային արտադրատեսակների նմանակների տեսապատկերումը կամ ձայնային պատկերումը տեսաձայնային ստեղծագործություններում (հեռուստատեսային ֆիլմեր, տեսաֆիլմեր՝ հեռուստատեսության, ռադիոյի կամ ինտերնետի միջոցով հեռարձակվող) թույլատրվում է բացառապես հեռարձակողի կողմից նման ստեղծագործության հեռարձակման սկզբից կամ ընթացքում ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործման վնասակարության վերաբերյալ տեղեկատվության հաղորդմամբ (ձայնային կամ պատկերի միջոցով):

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, **իսկ նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը** սահմանում են.

«8. Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:»

Հիմք ընդունելով վերը նշված իրավական դրույթների պահանջները, Հանձնաժողովն ամրագրում է, որ Հեռարձակողը տեսալսողական հաղորդումներ ցուցադրելիս պարտավոր էր պահպանել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի առանձնահատկությունները սահմանող դրույթները:

Փաստենք, որ Հեռարձակողը 2021 թվականի փետրվարի 3-ից հանդիսանում է Հանձնաժողովի կողմից հեղինակազորված իրավաբանական անձ և պարտավոր էր պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով, ուստի օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում է իրավական հետևանքներ և Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում պարտավոր էր պահպանել **Օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասով** սահմանված դրույթի պահանջները:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է վարչական վարույթի ընթացքում Հեռարձակողի կողմից ներկայացված պարզաբանումներն ու փաստարկները, մասնավորապես, որ խախտումը պայմանավորված է եղել թողարկող, մոնտաժող

անձնակազմի թերացմամբ, դիտավորյալ բնույթ չի կրել և որ ռեպորտաժի նպատակն է եղել ներկայացնել ծխելու բացասական ազդեցության մասին վիճակագրական տվյալներ:

Հեռարձակողը նշել է նաև, որ 2023 թվականի ապրիլի 26-ի տեսանյութում երևացել են ծխելը թողնելու մասին բրոշյուրներ և կա ընդամենը ծխելու մոտ հինգ վայրկյան տևողությամբ կադր, հեռվից և աղավաղված, սակայն դրանք բավարար հիմք չեն կարող հանդիսանալ Հանձնաժողովի կողմից Օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթով սահմանված իրավախախտումը չարձանագրելու և պատասխանատվությունը չկիրառելու համար:

Այսպիսով, Հեռարձակողը փաստացի ընդունել է իրավախախտման փաստը, որի մասին նշել է իր պարզաբանման մեջ:

Հանձնաժողովը սույն խախտումն արձանագրելիս կարևորում է նաև այն, որ ծխելու տեսարաններ պարունակող տեսալսողական հաղորդման հեռարձակումն ըստ էության կապված է հանրային շահի հետ, որը տվյալ կոնկրետ դեպքում, ինչպես նաև ընդհանրապես ներառում է իր մեջ հանրության առողջության ու շրջակա միջավայրի պահպանումը: Այս դեպքում պետք է փաստել նաև, որ ծխախոտի դեմ պայքարը հանրային առողջության պահպանման համար է կատարվում և Հեռարձակողը պարտավոր էր պահպանել հանրային առողջության պահպանմանն ուղղված Օրենքի վերոնշյալ դրույթի պահանջը:

Այսպես, հիմք ընդունելով Օրենքի վերը նշված դրույթները և ձեռք բերված փաստերը, այն է՝ «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ» ՍՊ ընկերության կողմից հեռարձակվող «Ազատություն Թիվի» տեսալսողական ծրագրի 2023 թվականի ապրիլի 26-ի տեսալսողական հաղորդումների ընթացքում ցուցադրվել են ծխելու տեսարաններ, որոնք սակայն չեն ուղեկցվել «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառմամբ:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք.

3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 57-րդ հոդվածի 24-րդ մասի համաձայն՝ Ծխելու տեսարաններ պարունակող տեսալսողական հաղորդման մեկնարկին տեսանելի չափով, հինգ վայրկյան տևողությամբ «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառման ուղեկցման պահանջը չպահպանելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Այսպես, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասով, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով Օրենքի 57-րդ հոդվածի 24-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը.

ՈՐՈՇԵՑ

1. «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 24-րդ մասով սահմանված վարչական տույժը, տուգանելով սահմանված 100000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3.Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Տ.ՀԱԿՈԲՅԱՆ

02 հունիսի 2023թ.
ք.Երևան